№ 187 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 25 1901 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 25 № 187

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Իրաւասութեան փոփոխութիւն.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բաթումից. Նամակ Շուշուց. Նամակ Էջմիածնի գաւառից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սիօնիզմ։

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Թէ սկզբունքի և թէ գործնական տեսակէտից կարևոր նշանակութիւն ունի այն հայեացքը, որ ռուսաց կրօնական „Церковный Вѣстникъ“ թերթը յայտնում է ամուսնալուծութեան վերաբերութեամբ։ Նա այն կարծիքն է յայտնում, թէ ամուսնալուծութեան հարցերը պէտք է գտնվեն մարմնաւոր իշխանութեան, այսինքն ոչ հոգևոր, այլ աշխարհական դատարանի ձեռքին, որը աւելի բազմատեսակ և ուժեղ միջոցներ ունի քննելու ամուսնալուծութեան իւրաքանչիւր մի դէպք և աւելի հեղինակաւոր կերպով սահմանելու իր որոշումները։

Դատական օրգանները այժմ էլ յաճախ զբաղված են ընտանեկան անհամաձայնութիւնների, ժառանգական վէճերի, ազգակցական ընդհարումների խնդիրներով և շատ դէպքերում նրանք իրապէս քննում են այն գործերը, որոնք համարվում են հոգևոր իշխանութեան իրաւասութեան շրջանում։ Ամուսնալուծական խնդիրների յանձնելը մարմնաւոր իշխանութեանը մի բնական, մի ժամանակակից քայլ է պետական օրէնսդրական կեանքում։

Ինչպէս յայտնի է, հայերի մէջ նոյնպէս հոգևոր իշխանութեան իրաւասութեան տակ են գտնվում ամուսնալուծական գործերը և տարիների ընթացքում ամբարվել են բազմաթիւ փաստեր ամուսնալուծական դէպքերի մասին ամեն տեսակ որոշումներով։

Պէտք է նկատել, որ հոգևոր իշխանութիւնը անկարող հանդիսացաւ ամուսնալուծական խնդիրների քննութեան ժամանակ բաւականաչափ հեղինակաւոր դիրք պահպանելու։ Նա չը կարողացաւ հաւատ և վստահութիւն ներշնչել, որ նա կատարում է իր քննութիւնները անաչառ և խելացի կերպով, որ նա գիտէ կշռել կենսական և կենցաղավարական պահանջները և նրանց համեմատ կայացնել իր որոշումները։ Մենք ամենքս գիտենք մի շարք դէպքեր, որոնց վերաբերութեամբ փաստերը և ապացոյցները չեն դեր խաղացել այս և այն որոշումը կայացնելու համար, այլ բոլորովին կողմնակի ազդեցութիւններ և հանգամանքներ։

Հասկանալի է, որ այդպիսի պարագաներում կեանքի տրամաբանութիւնը պէտք է հարց դնէ՝ վերցնելու մի հիմնարկութեան ձեռքից նրա իրաւասութեանը յանձնված որոշ գործեր և տալ այն հիմնարկութեանը, որը աւելի վստահութիւն և հեղինակութիւն է ձեռք բերել իր մասաւոր պատրաստութեամբ և գործելու եղանակի կատարելութեամբ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Օգոստոսի 21-ին

Երկրորդ օրն է, որ այստեղ ընդհանուր խօսակցութեան առարկան հետեւեալ տխրալի դէպքն է։

Ամսի 11-ին, այստեղի նաւահանգստից մեկնում է բելգիական «Նորամմոր» շոգենաւը, որ մօտ մի ամիս էր նաւահանգստում խարիսխ գցած բեռնաւորվում էր նաւթով լի անդուկներով՝ Բոմբէյ տանելու համար։ Բայց ահա մեկնելուց անցել է 10—11 օր, բայց նաւը տեղ չէ հասել։ Կ. Պոլսից եւ այլ տեղերից հեռագիրներ են ստացվում, որ շոգենաւը որոշեալ ժամանակից ուշացել է, չը կայ։ Այսօրվայ եկած նաւերը լուր են բերել, թէ ռուս-թրքական սահմանագլխին, Տրապիզոնից ոչ հեռու, Խոֆիի մօտերքը (մօտ 8—10 ժամվայ ճանապարհ), ծովի մէջ տեսել են մեծ քանակութեամբ նաւթի անդուկներ։ Իսկ Պակէի վերջին եկած շոգենաւը հաստատ հաղորդում է, որ ինքը ազատել եւ Տրապիզոն է հասցրել վերոյիշեալ շոգենաւի երկու ծառայողներին, որոնց տեսել է ծովում վերջին ճիգը թափելիս՝ լողալով իրանց ազատելու նպատակով։

«Նորամմոր» շոգենաւի մէջ եղել են նաւապետը իր օգնականների եւ բոլոր ծառայողների հետ միասին, ընդամենը 40 հոգի, որոնցից ազատվել են երկու հոգի միայն. իսկ մնացածները նաւի հետ խորասուզվել են ջրի տակը։ Նաւի մէջ եղել է 222 հազար անդուկ նաւթ, առնված «Մանթաշեան եւ ընկ.» ֆիրմայից։ Ապրանքը ապահովագրված է եղել։

Ընդհանուր կանոն է, որ ամեն մի նաւ՝ նաւահանգիստ մտնելուց, այնպէս էլ մեկնելուց առաջ, պիտի ստանայ մաքսատան եւ կարանտինային վարչութիւնների կողմից յատկապէս նշանակած պաշտօնեաներից հարկաւոր թղթեր, թէ նաւը կատարել է օրինական ձեւականութիւնները։ Բայց վերոյիշեալ շոգենաւը, մեկնելու ժամանակ, խախտում է այդ ընդհանուր կանոնը եւ անուշադիր կերպով անցնում է գնում. երբ բաւական տեղ հեռացած է լինում նաւահանգստից, կարանտինային եւ մաքսատան վարչութիւնների պահանջմամբ, ծովի մէջ խարիսխ գցած զինուորական «Уралецъ»» շոգենաւից նախ՝ արձակում են մի անգամ դատարկ թնդանօթ, իմացնելու, որ կանգնեն. բայց նաւը շարունակում է իր ճանապարհը. կրկին են արձակում, էլի չէ լինում. երրորդ եւ չորրորդ անգամ լիքը թնդանօթից ռումբ են նետում շոգենաւի վրայով, այն ժամանակ միայն կանգնում է եւ թղթերը ստանալուց յետոյ շարունակում իր ճանապարհը։ Այնպէս որ լուր է տարածված, թէ կարելի է թնդանօթի արձակումից լինի վնասված. բայց դա անհաւանական է թւում, որովհետեւ եթէ թնդանօթաձգութիւնից լինէր վնասը, նաւը ստիպողաբար պէտք է ընկղմվէր եւ, ի հարկէ, միջի մարդիկը, այդ նկատելով, իրանց կեանքը կազատէին շոգենաւի միջի եղած մակոյկներով։ Բայց հիմք կայ կարծելու, որ շոգենաւը յանկարծակի կերպով չրջած լինի, որովհետեւ այդ օրը ծովը սաստիկ ալեկոծված է լինում, իսկ շոգենաւը, չը նայելով, որ մեծ քանակութեամբ ապրանք էր վերցրել, բայց մեծութեան պատճառով, դեռ ամբողջովին լիքը չէր, այնպէս որ ապրանքի ծանրութիւնը կարող էր թեքել դէպի մի կողմը եւ ընկղմվել։ Այդ կարծիքին են եւ նաւապետները։

Բեն. Մարտիրոսեան

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Օգոստոսի 15-ին

Յայտնի են այստեղ թեմական դպրոցի վերջին «զալմաղաների» ժամանակ հանդէս եկած այն ողորմելութիւնները, որոնց տխրահռչակ հերոսներն էին բաղդի ինչ կատակով Երեւանից Շուշի ընկած մի երկու ուսուցիչներ, իրանց հարազատ կտոր մի խեղճ ճեմարանաւարտի ու պարագլուխ վեղարաւորի հետ։ Նոյն տեսակ մի անյայտ կատակով, ինչ ճանապարհով եկել էին, այն ճանապարհով էլ անյայտացան երեւանեան հերոսները, Երեւի դպրոցական գործերից վաստակաբեկ եղած անդամները իրանց ծննդավայրում դադար տալու նպատակով։ Բայց բանն այն է, որ այդ «հերոսաբեռ-կարճատեսները», թողնելով Շուշին, չեն մոռացել իրանց արժանաւոր ժառանգին մի քանի հրահանգներ տալու, որոնցով անշեղ պիտի ընթանար մի անգամ ընդ միշտ գծած ճանապարհով պ. ճեմարանաւարտ ուսուցիչը։ Փառք ու պատիւ վերջինիս, որ այնքան սրբութեամբ իրագործում է նախորդներից ժառանգածը, գործադրելով դրա վրա իր ուղեղի բոլոր հնարագիտութիւնները։ Դեռ թարմ կը լինի պ.-ի յիշողութեան մէջ—թերեւս եւ մեծ հրճուանքով մտաբերէ—այն արկածը, որ տեղի ունեցաւ իր եւ մի քանի «խռովարար» ճանաչված աշակերտների մէջ։ Դէպքը իր մաղալու բնաւորութեամբ կեանքում նմանը չունեցող կուրեօզների շարքը կարելի է դասել։ Երեւակայեցէք, որ մի պ. ճեմարանաւարտ, որը Ղարաբաղի խեղճ մայրաքաղաքի հայկական դպրոցում ուսուցիչ կոչվելու դժբաղդութիւնն ունի, օգտվելով դէպքից, եղբօր խանութը պատսպարվելու լաւ տեղ համարելով, «մեծապատիւ ուսուցչի» դիրքով իջնում է արօտաւարից, առանց այլեւայլութեան տատանուելիքից, քսան գրվանքանոց քարը ձեռքն առնում ու... գլորում դէպի հրապարակով անցնող աշակերտները. եւ սխրագործութիւնը կատարեալ դարձնելու համար՝ չէ մոռանում նոյն իսկ վաղը եւ եթ վազել դատաւորի դուռը յայտնելու համար, որ աշակերտները եկել, եղբօր խանութը ցրիւ են տուել, իրան էլ մի լաւ ծեծել։ Անմահացնելու գործ չէ. ով քաջ է, թողէք այդպիսի մի խաղ խաղայ։

Բայց դեռ պ.-ը դրանով վերջակէտ չէ դրել իր քաջագործութիւններին, կարծելով թէ կատարած դերը այնքան կոմիքական չէ եղել հանդիսատեսներին ու լսողներին փառաւոր հրճուանք պատճառելու։ Այժմ արդէն նա կեանքի բեմում դերասանութիւնը թողել (հաւանօրէն այդ չկոլայում բաւական կրթված է համարում իրան), բեժիսեորի դեր է կատարում նոյն ոգով ու ուղղութեամբ՝ միշտ հարազատ ընտրած սկզբունքին—խայտառակութիւններ գործել։ Ճարել է մի քանի երդուեալ արբանեակներ, հրահանգել դրանց, որ այս ինչ աշակերտին, այն ինչին հետամուտ լինեն ու մի լաւ դրատեն (երեւի երեւակայօրէն կերած ծեծի վրէժն է լուծում), իսկ ինքը անցել է կուլիսների միւս կողմը, դժբաղդաբար թէ բարեբաղդաբար ջայլամի միամտութեամբ միայն գլուխը թաքցնելով։ Փաստը բնորոշ է, անկարօտ բացատրութիւնների. մնում է միայն ցաւել եւ խղճալ։ Իր այդ հերքուլէսութեամբ պ.-ը բաց սիրտակ ունի այս տարի եւս առանձնայատկութիւնը հէնց այն է, որ նրա մէջ չը կայ ոչ մի միտիկական տարր։ Նա իր կուսակիցներին չէ խոստանում ոչ մի հրաչք, այլ, ընդհակառակը, շարունակ հասկացնում է նրանց, որ իրանց անտանելի դրութիւնից նրանք կարող են ազատվել միմիայն իրանց չնորհիւ, երկարատեւ ու ծանր միահամուռ ճիգերից յետոյ։

Ոմանք սիօնիզմը երազանք են անուանում եւ անհնար են համարում նրա գործնական իրագործումը։ Այդ տեսակ հակառակորդների առարկութիւններին սիօնիստները հարիւրաւոր անգամներ հաստատել են տուել։ Այդ զուտ բացասական քննադատութիւնը կարելի է մի կողմ թողնել։ Նրա միակ հաստատ հերքումը կարող է համարվել սիօնիստների մինչեւ այժմ ձեռնարկած եւ ապագայում կատարելու որոշած գործերը։

Միմիայն այն հարցը, որ վերաբերում է հրէայ ազգութեան գոյութեան, կարող է համարվել այն կէտը, որի նկատմամբ, երեւի, երբէք կարելի չի լինի համաձայնութեան բերել սիօնիստ եւ ոչ սիօնիստ հրէաներին։

Ով որ կարծում է եւ պնդում է, թէ հրէաները ազգ չեն կազմում, նա, արդարեւ, չէ կարող սիօնիստ լինել։

Նա չէ կարող յարել այնպիսի շարժման, որ իմաստ ունի միայն այն չափով, որ չափով նրանք պատակ է դնում իր համար գոյութեան նորմալ պայմաններ ստեղծել անվնասելի պայմաններում ապրող ու տառապող ազգի համար։ Իսկ ով, ընդհակառակը, համոզված է, որ հրէաները ազգ են կազմում, նա անհրաժեշտօրէն պէտք է սիօնիստ դառնայ, որովհետեւ միմիայն իր հայրենի երկիրը վերադառնալը կարող է մարմնական եւ հոգեկան կորուստից ազատել ամեն տեղ արհամարհանքի, հալածանքի ու ճնշման ենթարկվող հրէայ ժողովուրդը։

Շատ հրէաներ, այն է՝ արեւմտեան Եւրոպայում ապրողները, ներքուստ բոլորովին կորել են հրէութիւնից եւ, հաւանօրէն, շուտով նոյնը կանեն եւ արտաքուստ,—եթէ ոչ իրանք, իրանց զաւակները եւ թոռները։ Նրանք ուզում են բոլորովին ձուլվել իրանց համերկրացի քրիստոնեաների մէջ։ Նրանք իրանց շատ վատ են զգում, երբ նրանց կողքին ուրիշ հրէաներ բարձրաձայն խօսում են հրէայ ժողովրդի մասին, իբր առանձին ազգի մասին, եւ պահանջում են, որ նրան որոշակի զատեն ուրիշ ազգերից։ Նրանք սաստիկ վախենում են օտարազգի համարվել իրանց ծննդավայրում, որի ազատ քաղաքացիներն են նրանք։ Նրանք երկիւղ են կրում, թէ այդպիսի վերաբերմունք իրանց նկատմամբ կը սատականայ, եթէ հրէութեան մի նշանաւոր մասը բացարձակ կերպով սկսէ պահանջել իր համար

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԻՕՆԻԶՄ

V

Ես աշխատեցի որքան կարելի է համառօտ ու օբիեկտիվ կերպով ցոյց տալ, թէ ինչ է սիօնիզմը, ինչ բանի է ձգտում, ինչպէս է նա առաջ եկել եւ ինչպէս է ընթացել մինչեւ այժմ նրա զարգացումը։ Ես մի քանի անգամ յիշեցի նմանապէս եւ այն, որ հրէաների մէջ սիօնիզմը հանդիպեց ամենակատաղի հակառակորդների։ Ես այս՝ անաչառապէս հարցը լուսաբանող համառօտ տեսութեան նպատակից դուրս եմ համարում նրանց հետ բանակռիւի մէջ մտնելը։ Միմիայն հարցի հետ ծանօթանալ ցանկացող ընթերցողների համար այդ բանակռիւը անօգուտ կը լինէր եւ անհեթեթ։ Ուստի ես միայն հարեւանցի կերպով կը խօսեմ սիօնիզմի հակառակորդների մասին։

Նրանցից շատերը բաւականանում են սիօնիստական շարժման ղեկավարների դէմ ուղղված անձնական մեղադրանքներով։ Յարձակվան այդ ձեւին՝ վիրաւորանքի ենթարկվածները կարող են պատասխանել լուութեամբ։ Մարդիկ, որոնք առանց ամենաչնչին անձնական օգուտի, դրդված միմիայն անշահասէր, ամենամաքուր սէրից դէպի իրանց դժբաղդ ցեղակիցները, յարգանքից դէպի իրանց վաղուց մեռած նախնիները եւ հանրամարդկային բարեացակամութիւնից՝ ծանր զոհողութիւններ են անում փողով, ժամանակով, ոյժերով եւ առողջութեամբ, որպէս զի բարձրացնեն իրանց ազգը եւ միլիոնաւոր անմեղ կերպով հալածվող մարդկանց ազատեն ամենադառն աղքատութիւնից,—այդպիսի մարդիկ իրաւունք ունեն ծիծաղելով թօթուել ուսները, երբ հակառակորդները մեղադրում են նրանց շահասիրութեան կամ մնափառութեան մէջ։

Այդ հակառակորդներից դուրս կան եւ այնպիսիները, որոնք փորձում են պատճառաբանել իրանց հակառակութիւնը։ Նրանք սիրում են համեմատել սիօնիզմի առաքեալներին տրխրահռչակ Սաբբատայ Ցվիի նման սուտ մեսիաների հետ, որոնք բաւական յաճախադէպ երեւոյթ էին ներկայացնում հրէական պատմութեան մէջ եւ միշտ ամենածանր աղէտներ են բերել իրանցից խաբվող հրէայ ազգի գլխին։ Սիօնիզմի համեմատութիւնը Սաբբատայ Ցվիի տիպի սուտ մեսիաների դատարկախօսութեան կամ խաբէութիւնների հետ կարող է բացատրվել միմիայն խիստ մեծ թիւրիմացութեամբ կամ չարակամութեամբ։ Սիօնիզմի առանձնայատկութիւնը հէնց այն է, որ նրա մէջ չը կայ ոչ մի միտիկական տարր։ Նա իր կուսակիցներին չէ խոստանում ոչ մի հրաչք, այլ, ընդհակառակը, շարունակ հասկացնում է նրանց, որ իրանց անտանելի դրութիւնից նրանք կարող են ազատվել միմիայն իրանց

«արդիւնաւոր պաշտօնը» շարունակելու եւ աշակերտների գլխին մի պատուհաս դառնալու. ասենք այնքան էլ զարմանալի չէ այդ, քանի որ գործը հայկական է եւ լիազօր վեղարաւորի քմահաճոյքից կախված, բայց ժամանակ է վերջապէս հասկանալու, որ լաւ, թէկուզ հէնց ամենահրաշալի կերպով քար գլորելը իսկի էլ գրաւական չէ ամենավատ ուսուցիչը նոյն իսկ լինելու։ Մեր այս հերոսը այս տեղի հասարակութեան կողմից ընդհանրապէս եւ աշակերտների կողմից մանաւորապէս ծաղր ու ծանակ ճանաչված Լ. Աղախանեանցն է, որը քաղաքումս իր պատուաւոր տիտղոսներն ունի վատակած։ Թէեւ պ.-ը հրճուել միայն կարող է, քանի որ անունը յիշվում է լրագրութեան մէջ, բայց մենք չը կամեցանք նրան այդ բանից զրկել. փոքր մարդիկ արժանի են չնչին հրճուանքի։ Ս.

ՆԱՄԱԿ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՒԱՌԻՑ

—

Սամարա, օգոստոսի 19-ին

Արդէն մի շաբաթից աւելի է, որ մեր կողմերում կալսելը վերջացել է։ Ներկայումս ցորենի առ եւ ծախս չը կայ, որից յայտնի լինէր ցորենի որոշ գինը։ Դա աւելի յայտնի կը լինի, երբ Շիրակի եւ Աբարանի հացահատիկներն էլ հրապարակ դուրս կը գան, որովհետեւ գլխաւորապէս դրանցից է կախված մեր երկրի թանգութիւնը կամ էժանութիւնը։ Այնուամենայնիւ, պէտք է ասել, որ հացահատիկը վատ բերք տուեց։ Այգիներն էլ շատ տխուր տեսարան են ներկայացնում. մարդ բոպէներով ժան է գալիս նրանց մէջ, հազիւ է նշմարում մի քանի հատուկտոր ողկոյզներ։ Սրանք հետեւանք են այս տարվայ անկանոն անձրեւների։ Սոյնպիսի դրութեան մէջ է մեր գաւառի ամբողջ դաշտային մասը։

Միջակ է այս տարի բամբակը եւ շատ տեղերում միջակից էլ լաւ։ Թէեւ յուլիսի մէջ մի քանի տեղեր «տօթը» դիպաւ, սակայն մեծ վնաս չը հասցրեց, այնպէս որ գիւղացիները կարող են դրանով իրանց հարկերը տալ եւ առանին մանր-մունր ծախսերը հոգալ։

Համարեա ամսից աւելի է, որ «բգուռոյցը» մեծ թւով երեխաներ է զոհ տանում։ Այս տարափոխիկ հիւանդութիւնը գարնան սկզբներին յայտնվեց եւ մեր գաւառական բժիշկը եկաւ, զանազան պատուէրներ առաւ եւ կարգադրութիւններ արեց, դեղօրայք բաժանեց, սակայն անօգուտ անցաւ, որովհետեւ, ինչպէս ուրիշ գիւղերում, նոյնպէս եւ այստեղ, բժշկի վրա նայում են որպէս մի հոգէառ հրեշտակի, այնպէս որ, երբ բժիշկը հիւանդութեան դէպք պատահած տանից դուրս էր գալիս, իսկոյն նրա ետեւից ներս էին թափվում «տատէր—բժշկուհիները» եւ ստիպում, որ բժշկի դեղը չը գործադրեն, եթէ ոչ՝ հիւանդը կը մեռնի։ Դրանից յետոյ այդ բժշկուհիները իրանց ուզածի պէս փաթաթում եւ զանազան բաղադրութիւններից եփած «խաշիլ» են դնում։ Այս կերպ հիւանդութիւններին քիչ չէ նպաստում նաեւ անմաքրութիւնը։ Տների բակերը շատ չեն զանազանվում փողոցից։ Կան նոյն իսկ գիւղացիներ, որոնց արտաքնոցները բնակարաններին կից, դէմ առ դէմ են գտնվում, կամ կտուրներում...

Այս դժբաղդութիւնները կարծէք քիչ են, բորենին էլ մէկ կողմից է սարսափեցնում մէջ ընդ մէջ յափշտակութիւններով։ Բացի նախորդ նամակից («Մշակ» № 144) մէջ յիշվածներից, անցեալներում կրկին կտուրի վրա քնած մի 35 տարեկան ընտանիքի տէր մարդու տանում, ուտում է եւ էլն էլ թողնում ու փախչում է։ Լսում ենք նոյնպէս, որ Քասախ գետի նախկին հունի մէջ վրանաբնակ գնչուներից գիշերով մի երեխայ է փախցրել եւ կերել։

Ի նկատի ունենալով այս, ամսիս 17-ին պ. Նահանգապետը հրամանագրեց Էջմիածնի գաւառապետի պաշտօնակատարին, որ մեծ թւով կօգակներ վերցնէ եւ պրիստավի, հասարակութեան տանուտէրի եւ գիւղացիների հետ գնայ որոնէ գազանին։ Երէկ, ամսիս 18-ին, մեր գաւառապետի պաշտօնակատարը բազմաթիւ կօգակներով Ներքին-Այլանլուի եւ հայոց Զէյվայի դաշտերը եւ այգիները փնտռեց, բայց ոչինչ չը կարողացաւ գտնել։ Մի քանի ժամ անօգուտ որոնելուց յետոյ, որոնողները վերադարձան Վաղարշապատ։

Կարծում են, որ այդ գազանը պահված պէտք է լինի Սեւ-Ջուր կոչված գետի, կամ Այղր լճի եղերքներում գտնվող եղէգների մէջ։ Ճիշդ կերպով գազանին տեսնող չէ եղել. նրէ եղել են էլ, զանազան կերպ են նկարագրում գիւղացիները։ Ոմանց ասելով՝ սեւ գոյնի է, միւսների ասելով մոխրագոյն, նրա դունչը, ասում են, բաւական նման է սովորական գայլերի դունչին, իսկ ղլուխը՝ աւելի մեծ, կուրծքը լայն, յետի կողմը աւելի բարակ եւ պոչը երկար է։

Իսկ թէ վերոյիշեալ նկարագրութիւնները որքան ճիշդ են բորենու վերաբերութեամբ, այդ չը գիտենք։

Բ. Մարտիրոսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, օգոստոսի 24-ին, Կովկասի պ. կանգավարչապետ իշխան Գոլիցին եւ նրա օգնական Ֆրէզէ ուղեւորվեցին Բաթում՝ Օգոստափառ Անձանց դիմաւորելու համար։

—

Կովկասեան ցուցահանդէսի վարչութիւնը իր վերջին նիստում որոշեց մի շարք միջոցներ ձեռք առնել ապահովելու ցուցահանդէսի շինութիւնը հրդեհից։ Հրաւիրված են հրդեհաշէջներ եւ առանձին հսկողներ, որոնք պէտք է թէ ցերեկները եւ թէ գիշերները հետեւեն, որ կրակ երեւեցած ժամանակ՝ իսկոյն միջոցներ գործադրվեն հանգցնելու եւ կղզիացնելու նրան։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի քաղաքային դումայի առաջին նիստը պէտք է տեղի ունենայ սեպտեմբերի 3-ին, երկուշաբթի օր։

—

Ցուցահանդէսի ժամանակ իւրաքանչիւր խմբագրութիւն պէտք է ունենայ երեք մշտական տոմսակ ցուցահանդէսը այցելելու համար։ Մշտական տոմսակներ պէտք է ունենան առհասարակ այն անձինք, որոնք մշտական գործ ունեն ցուցահանդէսում. իսկ հասարակ էկսպօնենտները կը ստանան մի որոշ թիւ տոմսակների, օրինակ, 5—10 հատ, որոնց վերջանալուց յետոյ՝ նրանք պէտք է այցելեն վճարով։ Մշտական տոմսակները նշանակութիւն չը պիտի ունենան երեկոները, երբ ցուցահանդէսի բաժինները փակվում են եւ սկսվում են ներկայացումները։

—

Մեզ հաղորդում են, որ այգեգործական ժողովը պէտք է գումարվի սեպտեմբերի 9-ին։

—

Հինգշաբթի, օգոստոսի 23-ին, Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ տեղի ունեցաւ այն մասնաժողովի նիստը, որ պէտք է մշակէր Թիֆլիս քաղաքի փողոցները կատարելագործված ձեւով սալայատակելու հարցը։ Այդ նիստում մասնաժողովը որոշեց ասֆալտով ծածկել առ այժմ Դվորցովայա փողոցը, կովկասեան զինուորական շտաբի շինութեան առաջ գտնվող հրապարակը, Սուդերնայա եւ Օլգինսկայա փողոցների որոշ մասերը,—դատաստանական հաստատութիւնների եւ զինուորական դատարանի շինութիւնների առաջ,—եւ Մադատովսկայա փողոցը, Բարեատինսկայա փողոցից մինչեւ կամուրջը։ Ապա որոշվեց գրանիտայ խորանարդներով ծածկել Գոլովինսկի եւ Միխայլովսկի պրոսպեկտները, Պեսկովսկայա, Աւչալսկայա, Բուլվարնայա, Կիրօչնայա եւ ուրիշ փողոցներ, ինչպէս նաեւ Միջին փողոցը։ Ինչ վերաբերում է մնացած փողոցներին՝ որոշվեց խճուղել նրանց։

—

Պիրօգովեան մասնաժողովը, որի նպատակն է առողջապահական գիտելիքներ տարածել հասարակ ժողովրդի մէջ, «Новости» լրագրի ասելով, ուղարկել է Կովկաս թերթեր՝ առողջապահութեան հիմնական կանոններով, որոնք տպված են հայերէն, թուրքերէն եւ վրացերէն լեզուներով։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը մտադրութիւն ունի մտցնել տնարարութեան եւ գիւղատնտեսութեան պարտադիր կուրսեր կանանց մի ամբողջ շարք դպրոցների ծրագրի մէջ։

—

«Новое Обозрѣніе» լրագիրը հաղորդում է, թէ, լուրերին նայելով, շուտով հերթական պէտք է դառնայ Արաքսի հովտի միջով երկաթուղային գիծ անցկացնելու հարցը, որ հնարաւորութիւն կը տայ շահագործելու տեղական չափազանց հարուստ բնութեան արտադրութիւնները։

—

Նոյն լրագիրը հաղորդում է, թէ Ի. Զվոնարեվի՝ Պետերբուրգի հրատարակչական ֆիրման պատրաստում է տպագրութեամբ լոյս ընծայել մի ժողովածու, որ կազմել է պ. Զախարին Կովկասում ռուսաց տիրապետութեան հարիւրամեակի լրանալու առիթով։ Ժողովածուի մէջ կը մտնեն զանազանատեսակ բովանդակութեամբ՝ Կովկասին վերաբերեալ յօդուածներ։

—

Ֆինանսների մինիստրութեան մէջ մշակվում է մի նախագիծ, որով մտադրութիւն կայ Անդրկովկասեան երկաթուղու Հաջի-Կաբուլ կայարանից երկաթուղային մի ճիւղ անցկացնել դէպի Զանգեզուրի գաւառը, որ յայտնի է իր հանքային հարստութիւններով, եւ այս միջոցով նպաստել տեղական հանքագործութեան զարգացմանը։

—

Ռիգայից մեզ գրում են. «Ռիգայի պոլիտեխնիկումում այս տարի ընդունում են միայն տեղացիներին, Բալտեան երկրից, եւ այն էլ սահմանափակ թւով։ Այն ինչ իւրաքանչիւր տարի նոր ընդունված ուսանողների թիւը հասնում էր 200—250-ի, այս տարի պէտք է ընդունվեն միայն 80 հոգի։ Մի քանի հայ երիտասարդներ, որոնք եկել էին Ռիգայի պոլիտեխնիկումը մտնելու, վերադառնում են յետ»։

—

Պեատիգորսկից մեզ գրում են. «Ամսիս 19-ին տեղիս կենտրոնական հիւրանոցի դահլիճում դերասան Վրոյր սիրողների մասնակցութեամբ առաց իր վերջին ներկայացումը, խաղացին «Բաղդասար Աղբար» կոմեդիան, հեղ. Գարոնեանի։ Վրոյրի համար մի քան ասել աւելորդ եմ համարում, պատճառ՝ կարծէք թէ նա հէնց այդպիսի դերերի համար է ստեղծված. հարուստ միմիկան, (թէեւ երբեմն չափանցում է) քաջ ուսումնասիրած լինելով պոլսեցիների կեանքը եւ լաւ գիտենալով նրանց ոճը, հմուտ դերասանական ձեւերը, բոլորը ի միասին ամբողջացնում էին ու բնորոշում Բաղդասար Աղբարի տիպը եւ մեծ զբաղմութիւն ու բաւականութիւն պատճառում նայողներին։ Իսկ ինչ վերաբերում է սիրողներին, նրանք կարողացածին չափ քարշ տուին իրանց դերերը։ Երեկոյթը վերջացաւ զաւեշտով։ Տեղիս եկեղեցական խումբը, որ կազմված է երկու սեռի սիրողներից՝ մեծ գոհացում պատճառեց ունկնդիրներին։ Առհասարակ խումբը շատ սիրով է վերաբերվում գործին. թող նա օրինակ լինի մեր միւս հայաշատ քաղաքների օրիորդներին ու պարոններին։ Երգեցին մի քանի խմբական երգեր.—«Լռեց։ Ամպերը», «Աբրբան», «Բեզի մեռնեմ, Էջմիածին» եւ այլն, ու արժանացան բուռն ծափահարութիւնների։ Մարապետ Դօնիկեանը, երեւում է, որ ոչ մի ջանք չէ խնայում եւ կարողացածին չափ խումբը հասցրել է գեղարուեստական զարգացման այն աստիճանին, որ խումբը կարողանում է առանց դժուարութեան կատարել երգի գեղարուեստական բոլոր նրբութիւնները՝ թէ եկեղեցական եւ թէ ազգային երգերի մէջ։ Երեկոյթը բաւական ուրախ տրամադրութեան տակ վերջացաւ։ Մուտքի կողմից վատ չէր»։

—

Ղազարից մեզ գրում են. «Օգոստոսի 5-ին, հայոց նախկին արական դպրոցի դահլիճում Նոր-Նախիջեւանի թեմական դպրոցի աշակերտների երեկոյթն էր։ Երեկոյթի ծրագիրը կազմված էր բազմակողմանի եւ ճոխ, որ բաղկացած էր մի քանի մասերից։ Ներկայացրին «Խէչօի թուղը» վոդեվիլը, որ անցաւ բաւական աջող եւ մեծ զուարճութիւն պատճառեց ժողովրդին։ Հետեւեալ երկու մասերը կօնցերտական էին, որին մասնակցում էր եւ պ. Ա. Մանուկեան իր քառաձայն խմբով։ Երգեցին մի քանի երգեր։ Սոլօ երգեց պ. Բ. Մեղնիկեան։ Բաւական լաւ կատարվեցան նուագածութիւններ, որտեղ մասնակցում էին եւ Վլա-

---

ինքնուրոյն ազգի իրաւունքներ, եւս աւելի, եթէ երկրագնդիս որ եւ է կէտում արդարեւ ստեղծվի հրէութեան քաղաքական եւ կուլտուրական կենտրոն, որի շուրջը կը համախմբվեն ազգայնաբար միացած միլիոնաւոր հրէաներ։

Զուլման կուսակից հրէաների այդ բոլոր զգացմունքները բոլորովին հասկանալի են։ Իրանց տեսակէտից նրանք իրաւունք ունեն։ Բայց նրանք ոչ մի հիմք չունեն պահանջելու, որ սիօնիզմը ի հաճոյս նրանց ինքնասպանութիւն գործէ։ Իրանց ծննդավայրում երջանիկ ու զոհ հրէաները, որոնք վրդովվելով մերժում են այդ ծննդավայրից հեռանալու առաջարկութիւնը, ամբողջ հրէայ ազգի մօտ մի վեցերորդն են կազմում, դիցուք 2 միլիոն հոգի 12 միլիոն ժողովրդից։ Մնացեալ հինգ վեցերորդականը, մնացեալ 10 միլիոն հոգին, իրանց անբախտ են զգում իրանց բնակավայրում եւ ամեն տեսակ հիմքեր ունեն այդ բանի համար։ Այդ տասը միլիոնին չէ կարելի խորհուրդ տալ ընդ միշտ խոնարհաբար մնալ ստրկութեան մէջ, հրաժարվել ազատութիւնից ազատվելու որ եւ է ձգտումից, միմիայն այն պատճառով, որ երկու միլիոն բախտաւոր եւ զոհ հրէաների բաղձանքները մնան անխախտ։

Սակայն, սիօնիստները խորապէս համոզված են, որ ձուլման կուսակից հրէաների երկիւղը անհիմն է։ Հրէայ ազգի համախմբումը Պալեստինէյում չի ունենալ այն հետեւանքները, որոնցից նրանք վախենում են։ Եթէ նորից երեւան գայ հրէից տէրութիւնը (Iudenland), հրէաները կարող են ազատ ընտրել—վերադառնալ արդեօք այնտեղ, թէ մնալ իրանց այժմեան ծննդավայրում։ Շատերը անշուշտ կը մնան, եւ դրանք իրանց ընտրութեամբ կապացուցանեն, որ գերադասել են ծննդավայրը պատմական հայրենիքին։ Կարելի է, որ անտիսեմիտները այն ժամանակն էլ շարունակեն նետել նրանց երեսին «օտարազգի» ծաղրական եւ նենգաւոր մականունը։ Բայց նրանց համերկրացի ճշմարիտ քրիստոնեաները, նրանք, որոնք մտածում եւ զգում են Աւետարանի վարդապետութեան եւ օրինակի համաձայն, համոզված կը լինեն, որ այդ հրէաները իրանց ծննդավայրում օտարազգի չեն համարում իրանց, եւ կանոնաւոր կերպով կը բացատրեն նրանց յօժարակամ հրաժարումը իրանց սեփական հրէական տէրութիւնը վերադառնալուց, նրանց հաւատարիմ սէրը դէպի ծննդավայրը եւ դրացի քրիստոնեաները։

Սիօնիստները գիտեն, որ նրանք յանձն են առել մի գործ, որ անօրինակ դժուարութիւններ է ներկայացնում։ Դեռ երբէք փորձ չէ արված կարճ ժամանակում եւ խաղաղ միջոցներով մի քանի միլիոն մարդիկ տեղափոխել մի տեղ զանազան երկիրներից, միլիոնաւոր՝ ֆիզիկապէս սպառված եւ արհեստազուրկ արնանկների դարձնել երկրագործներ ու անասնապահներ, ընութիւնից խորթացած քաղաքացի խանութպաններին, առեւտրականներին եւ գործակալներին նորից ընտելացնել գութանին եւ անդամատ հողին։ Պէտք կը լինի ընտելացնել միմեանց զանազան երկիրներում ծնված հրէաներին, գործնականապէս վարժեցնել նրանց ազգային միութեան եւ այն՝ յաղթելով այնպիսի գերմարդկային խոչընդոտների, ինչպէս են լեզուների, կուլտուրայի եւ ծննդավայրից բերած՝ մտքի օտարազգային սովորութիւնների ու նախապաշարումների, հակումների ու հակակրութիւնների տարբերութիւնները։

Այդ հերկուլէսեան աշխատանքի մէջ սիօնիստներին քաջալերում է այն համոզմունքը, որ նրանք ստանձնել են անհրաժեշտ եւ օգտակար գործ, սիրոյ եւ բարոյականութեան գործ, արդարութեան եւ իմաստութեան գործ։ Նրանք ուզում են իրանց ցեղակիցներին, ուրիշ մինչեւ տասը միլիոն հոգու, փրկել անելանելի աղքատութիւնից։ Նրանք ուզում են անախորժ հարեւանութիւնից ազատել այն ազգերին, որոնց մէջ նրանք այժմ քաշ են տալիս իրանց գոյութիւնը։ Նրանք ուզում են ոչնչացնել այն նշանակէտը, որ այժմ կազմում են հրէաները անտիսեմիտիզմի համար, որ ամեն տեղ ստորացնում է հասարակական բարոյականութեան աստիճանը եւ զարթեցնում է ամենամութ բնազդներ։ Նրանք ուզում են հրէաներին, որոնք այժմ մեղադրվում են օտարակերութեան (պարազիտութեան) մէջ, դարձնել օրինակելի աշխատաւորներ։ Նրանք ուզում են իրանց քրտինքով ոռոգել իրանց հայրերի երկիրը, որ այժմ անապատ է ներկայացնում, եւ իրանց ձեռքերով մշակել, մինչեւ որ նա դառնայ ծաղկած պարտէզ, ինչպէս էր երբեմն։ Այդպիսով սիօնիզմը հաւասար չափով ձգտում է ծառայել դժբաղդ հրէաներին եւ քրիստոնեայ ազգերին, քաղաքակրթութեան եւ համաշխարհային անտեսութեան։ Այն ծառայութիւնները, որ ցանկութիւն եւ հնարաւորութիւն ունեն մատուցանել սիօնիստները, բաւական մեծ բան են, որպէս զի իրաւունք տրվի մեզ յուսալ, որ քրիստոնեայ աշխարհն էլ կը գնահատէ այդ գործը եւ կաջակցէ նրան գործունեայ համակրութեամբ։

Տ. Ե.

դիկավկազի գիմնազիաները։ Մի քանի նուագածութիւններին ներդաշնակում էր դաշնամուրի վրա օր. Լ. Կաբախիձէ։ Կարդացվեցան նոյնպէս եւ ոտանաւորներ։ Երրորդ մասը կազմում էին կենդանի պատկերները՝ Ռոմ. Ատուամեանի, որոնք անցան հիանալի կերպով։ Երեկոյթը վերջացաւ ասիական եւ եւրոպական պարերով, որոնք տեւեցին մինչեւ առաւօտեան 5 ժամը։ Ժողովուրդը շատ գոհ մնաց երեկոյթից, բայց ափսոս որ նիւթապէս շատ քիչ է աջակցում, որի պատճառով երեկոյթը 11 ռուբլի վնաս պատճառեց կազմողներին։ Լսում ենք, որ թեմական դպրոցի աշակերտները ժառդիր են տալ էլի մի ընտանեկան երեկոյթ։ Ցանկանում ենք աջողութիւն»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ

—

Ֆրանկֆուրտ, օգոստոսի 18-ին

Գերմանական բարձրագոյն դպրոցների թիւը մէկով աւելացաւ։ Ներկայ տարվայ հոկտեմբեր ամսի 21-ին (ն. տ.) Գերմանիայի Ֆրանկֆուրտ (Մայնի վրա) քաղաքում կը բացվի եւ իր գործունէութիւնը կը սկսէ սոցիալական եւ առեւտրական գիտութիւնների նոր ակադեմիան, որ իր ծրագրով եւ կազմակերպութեամբ բոյորովին տարբերվում է մինչեւ այժմ Գերմանիայում գոյութիւն ունեցող ակադեմիաներից։

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ արեւմտեան Եւրոպա, մանաւանդ Գերմանիա դիմող հայ ուսանողների մի զգալի տոկոսը այժմ սովորում է առեւտրական, սոցիալական եւ տնտեսական գիտութիւններ, մեր նպատակն է այս նամակով մի քանի համառօտ տեղեկութիւններ հաղորդել վերոյիշեալ ակադեմիայի ծրագրի եւ կազմակերպութեան մասին, որոնց հետ մենք Ֆրանկֆուրտում առիթ ունեցանք աւելի մօտիկից ծանօթանալու։

Սոցիալական եւ առեւտրական գիտութիւնների նոր ակադեմիան պէտք է պահպանվի Ֆրանկֆուրտ քաղաքի եւ պրուսական կառավարութեան նիւթական օժանդակութեամբ։ Ակադեմիայի գլխաւոր նպատակն է Գերմանիայի եւ արտասահմանի համար պատրաստել ներկայ կեանքի սոցիալական եւ տնտեսական պահանջներին համապատասխանող կրթված անդամներ։

Բացի Ֆրանկֆուրտի նոր ակադեմիայից, Գերմանիայի առեւտրական գրեթէ բոլոր խոշոր կենտրոններն էլ ունեն իրանց առեւտրական ճեմարանները. օրինակ, Լայպցիգ, Բերլին, Համբուրգ, Դրէզդէն, Կեօլն եւ այլն, բայց Ֆրանկֆուրտի ակադեմիան Գերմանիայի առեւտրական բարձրագոյն միւս դպրոցներից տարբերվում է 1) նրանով, որ այստեղ առեւտրական գիտութիւնների հետ զուգընթացաբար եւ մասնագիտօրէն պէտք է աւանդվեն նաեւ սոցիալական գիտութիւնները եւ 2) որ նոր ակադեմիան յարմարութիւն է տալիս զանազան կոչման եւ մասնագիտութեան տէր մարդկանց սոցիալական եւ առեւտրական գիտութիւնների էութեան հետ բաւարար կերպով ծանօթանալու։ Նոր բացվելիք ակադեմիայից կարող են օգտվել ոչ միայն վաճառականներ, արդիւնաբերողներ, տեխնիկներ եւ ինժեներներ, այլ եւ պետական եւ մասնաւոր բարձր պաշտօնեաներ, դատաւորներ, փաստաբաններ, առեւտրական ատորին դպրոցների դասատուներ եւ բացի դրանից կանայք, որոնք ազատ ժամանակ ունեն թէ իբրեւ իսկական ուսանողուհիներ եւ թէ իբրեւ ազատ ունկնդիրներ եւ այլն։

Ֆրանկֆուրտի սոցիալական եւ առեւտրական գիտութիւնների ակադեմիայի դասախօսութիւնները եւ գործնական աշխատանքները բաժանված են 5 մասերի.—առաջին մասում պէտք է աւանդվեն քաղաքատնտեսութիւն, սոցիալական քաղաքականութիւն, ֆինանսական գիտութիւն, առեւտրական, քաղաքացիական, պետական եւ վարչական իրաւագիտութիւն, տեխնոլոգիա, ժամանակակից նոր լեզուներ, պատմութիւն, գրականութիւն, փիլիսոփայութիւն եւ այլն։

Երկրորդ մասի դասախօսութիւնները գլխաւորապէս նշանակված են առեւտուրով զբաղողների համար։ Այդ մասում աւանդում են ընդհանուր հաշուապահութիւն, առեւտրական թղթակցութիւն եւ հաշուապահութիւն, ապրանքագիտութիւն, առեւտրական աշխարհագրութիւն, վաճառականութեան պատմութիւն, դաղթականական եւ հիւպատոսական գիտելիքներ եւ այլն։

Երրորդ մասի դասախօսութիւնները նշանակված են միայն նրանց համար, որոնք ցանկանում են առեւտրական գիտութիւնների հետ ծանօթանալ իբրեւ օժանդակ առարկաների հետ։

Չորրորդ մասի դասախօսութիւնները որոշված են միայն նրանց համար, որոնք ցանկանում են բաւարար կերպով ծանօթանալ սոցիալական գիտութիւնների եւ քաղաքատնտեսութեան հետ։

Իսկ հինգերորդ մասի գրեթէ բոլոր դասախօսութիւնները վերաբերում են ապահովագրական գիտութեան. օրինակ, ապահովագրութիւն, ապահովագրական մաթեմատիկա եւ ապահովագրական իրաւունք։ Այդ դասախօսութիւնները անմիջապէս նշանակված են միայն նրանց համար, որոնք ցանկանում են ապահովագրական գիտութեան դիպլոմի քննութիւն տալ։

Առաջին երկու մասերի դասախօսութիւնները լսելու եւ քննութիւն տալու իրաւունք ունեն գերմանական եւ արտասահմանեան միջնակարգ դպրոցներից աւարտած ուսանողները, իսկ վերջին երեք մասերի դասախօսութիւնները կարող են լսել նրանք, որոնց միջնակարգ, նախապատրաստական կրթութեան մասին բաւարար զեկուցումն կը տայ ակադեմիայի վարչական մասնաժողովը։

Բացի իսկական ուսանողներից Ֆրանկֆուրտի ակադեմիան բոլոր մասերի համար ընդունում է եւ ազատ ունկնդիրներ։

Ֆրանկֆուրտի ակադեմիայի բոլոր դասատուները առաջնակարգ ոյժեր են, որոնք հրաւիրվել են Գերմանիայի զանազան համալսարաններից եւ ուրիշ բարձրագոյն դպրոցներից։

Լ. Բաբայեան

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՑԻՑ

—

Վան, օգոստոսի 5-ին

Յուլիս 29-ին, կիրակի օր, տեղի ունեցաւ տեղւոյս հայկական որբանոցի ընթացաւարտներու վկայականաց բաշխման եւ յառաջիկայ տարեշրջանի բացման հանդէսը։ Սահակ վարդապետ քանի մը կղերներու հետ ներկայ ըլլալով՝ նախագահեց սոյն հանդէսին, ուր կը գտնուէր նաեւ ռուսաց հիւպատոսն ու իր թարգմանը։ Ժողովուրդը, ուրիշ տարիներից աւելի բազմութեամբ, եկած էր տեսնելու իր սիրած դպրոցի պտուղները եւ լսելու դպրոցի տարեկան հաշուեկշռի ընթերցումը։

Վարժարանը ութը շրջանաւարտներ կուտայ այս տարի, որոնք նախորդ տարիներու շրջանաւարտներուն նման պատիւ կը բերեն իրենց դպրոցին։ Ընթացաւարտները մէյմէկ նիւթերու վրա գրված գեղեցիկ ճառեր կարդացին, որով ի յայտ կը բերէին իրենց ստացած կրթութեան հմտութիւնը։

Կարդացուեցաւ վարժարանին ընդհանուր տեղեկագիրը ամենայտեղի մանրամասնութեամբ ու շատ խղճամիտ կերպով պատրաստուած։ Այս դպրոցը տարեկան ծախք ունեցած է 280 լիրա, որ հոգացված է աշակերտներու թոշակներէն (210 լիրա), Կ. Պոլսի Նրպատից յանձնաժողովէն (26 լիրա), Իվան Պօպովիչէն, սանուց որբախնամէն, Կորիւն վարդապետէն եւ Կ. Պոլսէն։ Այս գումարէն 30 լիրա միայն մնացեր է տարեկան վարձք տեսուչ պ. Համբարձումին, որ ընտանիքի տէր ըլլալով հանդերձ, իր տղան ալ Պոլսոյ Բօբէրտ կոլէջը ղրկած է, իր դպրոցին ապագայ վարիչը ընելու նպատակաւ, որուն համար տարեկան 40 լիրայի ծախք մը ունենալու է անշուշտ։ Ահա ձեզ մարդ մը զօրաւոր կամքի եւ բարձր նկարագրի տէր, որ հակառակ իր զոյգ աչքերու կուրութեանը, 24 տարիներէ ի վեր կը շարունակէ կառավարել հաստատութիւն մը, որ առաջնակարգ դիրք մը ունի Վասպուրականի եւ մինչեւ իսկ ուրիշ շատ մը գաւառներու մէջ։ Եւ սակայն, ինչպէս երեւցաւ պ. Համբարձումի խօսած ճառէն, այդ անկուն մարդը այլ եւս քիչ քիչ թուլանալու շաւղին մէջ պիտի մտնէ... Նիւթականն է, որ զայն կընկրկէ, եւ ոչ ուրիշ բան։ Եւ յիրաւի մեղադրելի չէ ինք, երբ 24 տարիներէ ի վեր ամենայն յամառութեամբ կը շարունակէ ազգին օգտակար ըլլալով վարել այս դպրոցը՝ իր հայրենական ժառանգութիւնն ալ այդ նպատակին համար տրորելով, ու այսօր փոխանակ իր վարժարանին եւ իր ընտանեաց ապագայ մը ապահովված ըլլալու, բոլորովին խախտու ու անհաստատ վիճակ մը ունի... Մեր ազգը ահա այսպէս կը վարձատրէ իր անխոնջ մշակները...

Եթէ այս տարի այս նպաստները չըլլային, վարժարանը ստիպված պիտի ըլլար ընդհատել իր շարունակութիւնը, անդին պարապ մը ձգելով մէջտեղ։ Եւ ո՞վ գիտէ թէ յառաջիկայ շրջանը ինչ կերպով պիտի վիրջանայ։ Մեր մէջ եւ մասնաւորապէս ռուսահայ վաճառականներու մէջ նուիրատուութեան խելացի ու օգտակար եղանակներ մուտ գտած են բաւականին։ Չի պիտի գտնուի արդեօք բարերար մը, որ հանդուցեալ Սանասարեանի կիսուն կամ քառորդին չափ նուէր մը տալով, ապահովէր այս դպրոցին ապագան՝ ազգային պաշտօնական մարմիններու ձեռամբ ապահով վիճակի մը մէջ դնելով այդ գումարը։ Եւ կամ գէթ ժողովուրդը չի՞ կրնար հանգանակութեամբ մը ծառայել այս նպատակին։ Յառաջիկայ տարի, այս դպրոցին քսանհինգամեայ յոբելեանը կատարած ատեն, ասկէ աւելի նպատակայարմար ու խելացի անակնկալ մը կարելի՞ է ունենալ, քան շատ մը չնորհաւորական ու չոր ուղերձներ... հարկ կայ չեշտելու, թէ հայ մամուլը մէկ պարտք մը ունի այս առթիւ կատարելիք։ Ինչու արդեօք, մեր շատ մը հաստատութիւններուն հանդէպ ունեցած վարմունքնիս նման, ասոր հանդէպ ալ այն տեսակ վարմունք մը կունենանք, որ գործը փճանալէ, խանգարելէ վերջ, ելնենք ողբեր յօրինելու անոր վրա։ Վերջին զղջումը ինչ արժէք ունի...

Խորէն—Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Մի շաբաթ առաջ լորդ Միլնէր վերադարձաւ Կապշտադտ։ Պատասխանելով Կապշտադտի քաղաքագլխի ողջոյնի ճառին, Միլնէր ասաց, թէ կարող է անուանել իրան իսկական մարդարէ։ Հարաւային Աֆրիկայից դէպի Լօնդոն ուղեւորվելուց առաջ՝ նա համարձակվեց երկու գուշակութիւն անել. առաջինը՝ թէ անգլիական ժողովրդի տրամադրութեան մէջ հարաւ-աֆրիկական գործերի վերաբերմամբ ոչ մի փոփոխութիւն տեղի չի ունենայ, երկրորդ՝ թէ նա, Միլնէր, կը վերադառնայ Լօնդոնից իր նախկին պաշտօնատեղին։ Երկու գուշակութիւնն էլ կատարվեցին։ Բոլոր կասկածները այդ հանգամանքի վերաբերմամբ ցրվեցին այն ընդունելութեամբ, որ ցոյց տուին նրան Անգլիայում, եւ հիմա ամենափոքր կասկած անգամ չէ կարող լինել, որ անգլիական ժողովուրդն եւ կառավարութիւնը անդառնալի կերպով վճռել են շարունակել հարաւ-աֆրիկական քաղաքականութիւնը։ Հարաւային Աֆրիկայի ապագան նրա ազգաբնակութեան ձեռքումն է։ Օրինակատար մարդիկ պէտք է անեն այն ամենը, ինչ որ կախված է իրանցից, որպէս զի կազմեն մի մեծ, ազատ ազգ, որ պարունակէ իր մէջ զանազան ազգութիւնների խմբեր, որոնք լինեն ազատ եւ անկախ, բայց միացած մշտական եւ անքակտելի ֆեդերացիայով աշխարհիս ամենամեծ պետութեան հովանաւորութեան տակ։

—Ֆրանսիական լրագիրները չափազանց մանրամասն տեղեկութիւններ են հաղորդում այն պատրաստութիւնների մասին, որոնք տեսնվում են Օգոստափառ Հիւրերին ընդունելու համար։ Շատ է գրվում նաեւ Պարիզ քաղաքի ջանքերի մասին՝ ստանալու Նոյա Մեծութիւնների կողմից այցելութեան համաձայնութիւն։ Պարիզը, յամենայն դէպս, կը կամենար պատրաստվել ընդունելութեան։ Այս ցանկութեանը արձագանք տալով՝ «Figaro» լրագիրը դիմեց հասարակական աշխատանքների մինիստրութեան ներկայացուցչին եւ հարցրեց, թէ մտադրութիւն կայ արդեօք Պարիզում եւս ընդունելութեան պատրաստութիւններ տեսնել։ Պատասխանը բացասական էր. բայց մինիստրի ներկայացուցիչ Բուվար ասաց, թէ Պարիզը, յամենայն դէպս, ամօթով չի մնայ եւ կը կարողանայ փառաւորապէս պատրաստվել մի քանի օրում, եթէ միայն դրական պատասխան ստացվի։ Ամենից աւելի պատրաստութիւններ են տեսնում, ի հարկէ, Դիւնկերքէն եւ Բէյմս քաղաքները։

—«Indèpendance Belge» խորհուրդ է տալիս չատ մեծ նշանակութիւն չը տալ Ֆրանսիական դեսպան Կոնստանի հեռանալուն Կ. Պոլսից։ Կոնստան թողել է Կ. Պոլսում դեսպանական գործերի հաւատարմատարին եւ դեսպանութեան ամբողջ կազմը։ Յուզվելու տեղիք կարող էր լինել միայն այն ժամանակ, եթէ այդ հաւատարմատարն էլ թողնէր ու հեռանար Թիւրքիայի մայրաքաղաքից։ Կոնստան կամենում էր միայն ճնշումն գործել Բ. Դրանվրա, ուղեւորվելով Ֆրանսիա՝ անձամբ խորհրդակցելու Դէլկասէի հետ, որին նա կը հաղորդէ տեղեկութիւններ Թիւրքիայի երկերեանի քաղաքականութեան մասին Ֆրանսիայի վերաբերմամբ եւ այն միջոցների մասին, որոնց հարկ կը լինի դիմել, եթէ պարզվի, որ սուլթանի շրջապատողները գտնվում են մի մեծ ցամաքային պետութեան բացառիկ եւ Ֆրանսիային անհաճոյ ազդեցութեան տակ։ Ինչ վերաբերում է Բ. Դրանը, նա տարաձայնութիւններ ծագեցնող հարցի մանրամասնութիւնների մէջ կը զիջանէ նոյնպէս, ինչպէս զիջեց սկզբունքի հարցում եւ բանը կը վերջացնէ նրանով, որ լիովի բաւարարութիւն կը տայ Ֆրանսիային։ Թիւրքիան ճակատագրական կերպով պէտք է հասնի այդ եզրակացութեան եւ նրա կողմից մեծ անզգուշութիւն է ձգձգել գործը եւ առաջացնել բարդութիւններ, որոնք աւելի եւս չեշտում են նրա դիպլոմատիական պարտութիւնները։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

23 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Օգոստոսի 23-ին, ժամի 4-ին կէսօրից յետոյ, Նորին Բարձրութիւն Թագաժառանգը եւ Մեծ-Իշխանուհի Օլգա Ալէքսանդրօվնա Իր Ամուսնու, Օլդենբուրգեան դուքս Իշխան Պետր Ալէքսանդրովիչի հետ մեկնեցին Պետերբուրգից «Յարուցա» զբօսանաւով դէպի Դանիա։

ԻՕԿՕՀԱՄԱ։ Չինական այն դեսպանութիւնը, որ գնում է Եապօնիա ներողութիւն խնդրելու եապօնական դեսպանատան քարտուղարի սպանութեան առիթով Պեկինում, կը հասնի վաղը Տօկիօ։

ՊԻՏԵՐՄԱՐԻՑԲՈՒՐԳ։ Նատալի առաջին մինիստրը ընտրողական ճառի մէջ յայտնեց, թէ Նատալի կառավարութիւնը պահանջում է նշանաւոր չափով ընդարձակել նրա երկիրը՝ միացնելով մի մեծ շրջան, որ այժմ պատկանում է Տրանսվալին եւ Օրանժեան հանրապետութեան։

ՊՐԵՏՕՐԻԱ։ Այսօր զինուորական դատարանին ներկայացան երկու բօէրներ, որոնք խոստովանել են, թէ միացել էին թշնամուն։ Վճիռը յետաձգված է։

ԲԱՐԲԵՐՏՕՆ։ Բօէրները օգոստոսի 17-ին, Մալէսանի մօտ, բռնկեցրին եւ այրեցին երկաթուղու գնացքը։ Դրա հետ միասին նրանք խորտակեցին երկրորդ գնացքը, որ եկել էր առաջինին օգնութեան։ Ոչ ոք վիրաւորված չէ։

ՄԻԴԴԼԲՈՒՐԳ։ Երկու օտարերկրացիներ եւ մի ապատամբ, որոնք գերի էին առնված Կամիդէբօյում, դատի ենթարկվեցին Գրաֆրէյնէտում եւ օգոստոսի 2-ին հրացանի բռնվեցին Կոլէսբէրգում։

Կ. ՊՕԼԻՍ։ Պաշտօնական տեղեկութիւնները Պարիզից ներկայացնում են Ֆրանսիային պատրաստ՝ դիմելու ծայրայեղ միջոցների Ֆրանս-Թիւրքական ընդհարման մէջ։ Արտաքին գործերի մինիստր Թէվֆիկ-փաշա այսօր հրաւիրեց Ֆրանսիական դեսպանատան խորհրդական Բապտին իր մասնաւոր բնակարանը։ Բապտ հաղորդեց այդ մասին Պարիզ եւ հրահանգներ է ապասում իր կառավարութիւնից։

Բ. Դուռը տեղեկութիւն է ստացել, թէ անգլիական զինուորական նաւերից մէկի հրամանատարը թոյլ չը տուեց թիւրքական «Շաբ» զինուորական նաւակին մտնել Կուէյտի նաւահանգիստը Պարսից ծոցում։ Բ. Դուռը տեղեկութիւն տուեց անգլիական արտաքին գործերի մինիստրութեանը, թէ բրիտանական նաւապետի վարմունքը հակառակ է երկու պետութիւնների բարեկամութեան։ Ուրիշ տեղեկութիւններին նայելով՝ դէպքը պատահել է այլ կերպ. անգլիական նաւապետը թոյլ չէ տուել թիւրքական զօրքերին ափ իջնել Կուէյտում, երկիւղ կրելով, որ դրանից անկարգութիւններ կը ծագեն։ Թիւրքական զօրքերի առաքումը դէպի Կուէյտ տեղի է ունեցել Բասրայի նահանգապետի պահանջմամբ։

ՊՐԵՏՕՐԻԱ։ Կիտչէնէրի պրոկլամացիան մինչեւ այժմ չէ ունեցել լուրջ աջողութիւն. իշխանութիւնները թոյլ տուին դեռ եւս կռիւ մղող բօէրների կանանց այցելել իրանց ամուսիններին, որպէս զի, ինչպէս իրանք ցանկանում էին, դարձնեն նրանց ուշադրութիւնը դիմադրութեան չարունակութեան անյուսալի դրութեան վրա։

ՏՈՒԼԱ։ Առաւօտեան՝ պաշտօնաթող մայոր Բուժէնկովի բնակարանում գտնված են ածելիով մորթված նրա երկու երեխաները, վեց եւ չորս տարեկան, եւ Բուժէնկովի զոքանչը. վերջինը կեանքի թոյլ նշաններով։ Ենթադրում են, թէ երեխաներին մորթել է զոքանչը։ Ոճրագործութիւնը խորհրդաւոր է։

ԿԻԵՎ։ Ընդունված են համալսարանում նոր ուսանողներ—518 քրիստոնեայ եւ 32 հրէայ. բոլորն էլ մեդալիստներ, համաձայն հաշուի, մտնողների 7%-ը։ Բացի դրանից ընդունված են 139 նախկին ուսանողներ եւ 8 հոգի էլ ուրիշ համալսարաններից։ Նորից ընդունված են 179 հոգի, որոնք ենթարկված էին զինուորական ծառայութեան՝ ժամանակաւոր կանոնների հիման վրա։ Այս կանոններով ընդամէնը զինուորագրութեան էին ենթարկված 205 հոգի։ Նոր ուսանողները այսպէս են բաժանված, ըստ ֆակուլտէտների.—լեզուագիտականում՝ 39, մաթեմատիկականում՝ 139, բնական գիտութիւնների ֆակուլտէտում՝ 97,

իրաւաբանականում՝ 169, բժշկականում՝ 88։ Հրէաները տուել էին 159 խնդիրներ։ Դասախօսութիւնները կը սկսվեն սեպտեմբերի 1-ից։

Կ. ՊՕԼԻՍ։ Ռուսական դեսպանը երէկ արտաքին գործերի մինիստրի հետ խորհրդակցութիւն ունեցաւ իրերի դրութեան մասին Հին-Սերբիայում, որ նա անուանեց ոչ բոլորովին պարզված։ Դեսպանը դարձրեց մինիստրի ուշադրութիւնը այն բանի վրա, որ անհրաժեշտ է լուրջ միջոցներ ձեռք առնել ապահովելու քրիստոնեայ ազգաբնակութեան խաղաղութիւնը, որ կը նպաստէ status quo-ի պահպանութեան։ Հրատարակված է իրադէ, որ իրաւունք է տալիս վերադառնալ երիտասարդ-սերբերին, որոնք փախել էին Սերբիա՝ քիչ ժամանակ առաջ Հին-Սերբիայում պատահած անցքերի պատճառով։

ՊԱՐԻԶ։ Սենայի դէպարտամէնտի նահանգական խորհրդի բիւրօն որոշեց ողջունել ռուսաց Կայսերական Զոյգին, երբ Նա կը հասնի Ֆրանսիա եւ ցանկութիւն յայտնեց, որ նրան հնարաւորութիւն տրվի արտայայտել Պարիզում այն հավակրանքը, որ տածում է Սենայի դէպարտամէնտի ազգաբնակութիւնը դէպի Կայսերական Զոյգը եւ ռուսաց ժողովուրդը։

ԲԵՐԼԻՆ։ Պրինց Ցուն իր ուղեկիցների հետ հասաւ ժամի 4-ին. Նրան դիմաւորեցին չինական դեսպանատան անդամները։ Եկողները եւ դիմաւորողները պալատական կառքերով գնացին այն բնակարանը, որ վարձված է պրինցի համար Տիրգարտէնում։ Առաջին կառքում նստած էր պրինց Ցուն գեներալ-մայոր Գէպֆնէրի հետ.

ԿԱՊՇՏԱԴՏ։ Զրահապատ գնացքը օգոստոսի 20-ին, Տաունգա կայարանը ուղեւորվելիս, դուրս եկաւ բէլսերից այն պատճառով, որ տեղացիները անկանոն էին դրել սլաքը։ Ենթադրում են, թէ տեղի է ունեցել դաւաճանութիւն, որովհետեւ մոտիկ տեղերում բօէրներ կան։

ՄԱՏԻԷՍՖՕՏԷՆ։ Շէպէրս, որին դեռ եւս հալածում է գնդապետ Ալէքսանդր, այժմ դիմում է դէպի հիւսիս։ Նա, ըստ երեւոյթին, հրաժարվել է արշաւանքից դէպի Կապի գաղթականութեան հարաւային շրջանները, որովհետեւ սպասված աջակցութիւնը չը գտաւ բօէրաստէր աֆրիկանդէրներից։ Տէրօկ, որ գործում է Շէպէրսի հետ միասին, յարձակման ենթարկվեց տեղական գաղթականական զօրքերի կողմից։

ԽԱՐԿՕՎ։ Հավալսարանում ընդունված են 266 հոգի, ի միջի որոց 8 հրէաներ։ Վերջինները ընդամէնը 12 հոգի էին, որոնք աւարտել էին գիմնազիան ոսկեայ մեդալով։ Տեխնոլոգիական ինստիտուտը ընդունված են 240 հոգի, որոնցից 7-ը հրէաներ են։ Այն հրէաները, որոնք գերազանց թւանշաններ ստացան բոլոր առարկաներից, 12 հոգի էին։ Ինստիտուտը միջնորդութիւն է յարուցել ընդունելու եւ մնացած հոգին։

24 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ներքին գործերի մինիստրը որոշեց արգելել «Новости» լրագրի հատով վաճառումը մի ամիս ժամանակով։

Հրատարակված է հաղորդակցութեան ճանապարհների մինիստրի կարգադրութիւնը՝ երկաթուղային գծերով խոշոր եղջիւրաւոր անասուններ խմբովին, ոչ պակաս ութ գլխից, տեղափոխվելու վերաբերեալ 18-րորդ յօդուածը փոփոխելու մասին։

ՏԻՄԷՆ։ Այստեղ բացվեց մինիստրական գիւղական եւ քաղաքային տարրական ուսումնարանների ուսուցիչների եւ ուսուցչուհիների համաժողովը, որ առաջինն է այս նահանգում։

ԼԻՍՍԱԲՕՆ։ Մօգամբիկից ստացված պաշտօնական հեռագիրը հաղորդում է, թէ Պրետորիա—Լօրէնցօ-Մարկեզէ երկաթուղային գիծը աւերված է Կօմատիպօրտից 30 կիլօմէտր հեռու գտնվող մի տեղում։

ԻՕԿՕՀԱՄԱ։ Չինական քաւիչ դեսպանութիւնը հասաւ այսօր Տօկիո։ Դիմաւորութիւն տեղի չունեցաւ։ Դեսպանութիւնը ուղղակի ուղեւորվեց հիւրանոց։

ՊԱՐԻԶ։ «Հաւասի գործակալութիւնը» հաղորդում է, թէ դեսպանատան խորհրդական Բատատ մերժեց, Պարիզից ստացած հրահանգի հիման վրա, Թէվֆիկ-փաշայի հրաւէրը այցելել նրան՝ նրա մասնաւոր բնակարանում։

ԲԵՐԼԻՆ։ Պրինց Ցուն հասաւ այստեղ իր բոլոր ուղեկիցներով Պոտսդամից եւ իջեւանեց հիւրանոցում։ Գոլուց անմիջապէս յետոյ՝ պրինցը Զժենիյմասի, գեներալ Լինչժանի, դեսպան Լուխայվանի եւ դնսպանատան քարտուղար Կին-Ինտէյի ուղեկցութեամբ այցելեց արտաքին գործերի մինիստրութեան մէջ ապագ-քարտուղար Ռիխտհոֆէնին, որը իսկոյն դրանից յետոյ փոխ-այցելութեան գնաց պրինցի մօտ։

ՊԵԿԻՆ։ Պակասած հրամանները, որոնց պատճառով լրացուցիչ արձանագրութեան ստորագրութիւնը յետաձգվում էր, այժմ ստացված են եւ յանձնված դեսպանների քննութեան։

ՊԱՐԻԶ։ Տեղեակ աղբիւրներից հաղորդում են, որ Լօրանդօ եւ Տուբինի ձեռնարկողները կը բաւականանան երեք տոկոսով այն գումարի, որ յօգուտ նրանց վճռել է դատարանը։ Ֆրանս-թիւրքական վէճի լուծումը դրանով նշանաւոր չափով հեշտանում է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից դուրս եկաւ
Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑԻ
«ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ»
Վաճառվում է Թիֆլիսի կենտրօնական գրավաճառանոցում։ 1—5

ՄԻ ՀԱՅ ԳԵՐԴԱՍՏԱՆՈՒՄ
ընդունում են ճաշողներ (նախլեբնիկներ) փոքրահասակ աշակերտներից, ձեռնտու պայմաններով։
Հասցէն՝ 1-ին Գօնչարնայա փողոց, № 7, Վառվառէ Գօգուայի տան վերին յարկում, Առեւտրական դպրոցի մօտ։ 2—5

ՄՇԵՑԻ ԱԻԵՏԻՔ ՍԱՓԱՐԵԱՆՑԻ ԱՄՈՒՍԻՆԸ
խնդրում է բարերար անձանց՝ վերցնելու իր 5 տարեկան արու զաւակը որդեգրութեան։
Ցանկացողը պէտք է դիմէ հետեւեալ հասցէով. Մարիինսկայա փողոց, № 20։ Այրի Եւա Սափարեանց։ 3—3

Մամուլի տակից դուրս եկաւ
ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ՈՒԽՏԻ
Ցարմարեցրած
ԱՐՔՈՒՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Դիմել կարելի է՝ Тифлисъ, священнику С. Саакянцъ եւ Центральная Книжная Торговля.
2—5 Սահակ քահանայ Սահակեան

ՁՈՒԽԱՃԵԱՆՑԻ
ՄՕԴՆԻ ՄԱՍՏԵՐՍԿԱՅԱ
տեղափոխված է Վէլիամինօվսկայա փողոց № 14, տուն Եղիազարօվի։ 3—4

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ
Ս. .Զ ԽԻԶԱՆԵԱՆ
Վերադարձել է Ժելեզնօվոդսկից։
(Ե. Հ. Չ.) 2—3

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ
մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց
ՁՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ օրուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բաքում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապօվի եւ Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։ 67—100

ՄԱՍՆԱՒՈՐ ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱ
ՅԱԿ. ԹԱԴԷՈՍԵԱՆՑԻ ԲԱԳԻՈՒՄ
(Զադրօվի փողոց, տ. Ալիեվի)
Աշակերտների ընդունելութիւնը փոքր եւ մեծ պատրաստական եւ I դասարաններում կը սկսվի օգոստոսի 20-ից։ Նախակրթարան մտնում են առանց քննութեան։ Խնդիրքներ եւ դոկումենտներ ընդունվում են ամեն օր, 9—12 ժամը։ Ուսումը սկսվում է սեպտեմբերի 3-ից։
5—12

Օգոստոսի 27-ից սկսվում է աշակերտուհիների ընդունելութիւն
ՕՐ. Մ. Մ. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ
ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ
Կուրսն է երկու տարի եւ անցնվում է Վօրտի մեթօդով։
Պարապմունքները կը սկսվեն երկուշաբթի, սեպտեմբերի 3-ից։ Պայմանների մասին կարելի է տեղեկանալ վերոյիշեալ օրից ամեն օր, ժամը 11-ից մինչեւ 2-ը։
Հասցէն՝ Уголъ Мухранской и Анчисхатской улицъ, домъ Мухранскаго. 2—2

Սեպտեմբերի 1-ից բացվում է Թիֆլիսում
ՅՈՎ. ՄԻՔ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆԸ
Երեխաները (տղաներ) ընդունվում են որպէս երթեւեկ, կիսապանսիօնէր եւ պանսիօնէր՝ որպէս զի պատրաստվեն մտնելու բոլոր միջնակարգ ուսումնարանների ստորին դասարանները։ Ընդունելութիւնը օգոստոսի 27-ից։ Վօզնեսենսկայա փողոց, տան Քափանակովի, № 4։
2—3

ԳԱՆՁԱԿ ՔԱՂԱՔՈՒՄ
Ուսումնարանական բարձրագոյն իշխանութեան թոյլատրութեամբ, ներկայ տարվայ օգոստոսի 20-ից բացվում են
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
հանրակրթական դպրոցով եւ պանսիօնով
Հանրակրթական դպրոցում, ի միջի այլոց, աւանդվում են ֆրանսիական եւ գերմանական լեզուները։
Օտարաքաղաքացիները դիմում են՝ Елисаветполь, учредителю коммерческихъ курсовъ, Е. Н. Исаакову. (Ե. Հ. Չ.) 4—10

ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔԻ VI ՇՐՋԱՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԾԻՐԱՁԵԱՆԻ
Ուսուցանում եւ պատրաստում է 4 ամսվայ ընթացքում
Պարապմունքի առարկաներն են.—1) Կրկնապատկական հաշուապահութիւն։ 2) Առեւտրական թուաբանութիւն։ 3) Թուաբանութիւն համրիչի վրա։ 4) Բանկային հաշուապահութիւն ըստ ամենայն ճիւղերի։ 5) Առեւտրական նամակագրութիւն։
Պարապմունքները սկվելու են 10-ին սեպտեմբերի, 1901 թ։ Կարելի է տեսնել ժամի 4-ից մինչեւի 8-ը երեկոյեան։ Հասցէն. անկիւն էիզարիի հրապարակի եւ Ակիմովսկի փողոցի, տ. իշխ. Շերվաշիձէ № 14։ (Չ. Չ.) 3—6

Ֆինանսների մինիստրի թոյլտուութեամբ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова)
Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական-առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։ Կուրսերում աւանդվում են՝ 1) Առեւտրական թուաբանութիւն եւ թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առեւտրական եւ բանկային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) Առեւտրական մատեանագիտութիւն. 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն եւ արագագրութիւն (ուղղումն ձեռագրի)։
Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ Եղբ. Յովհաննեան եւ ընկ. ԲԱԳՈՒԻ բաժանմունքում։ Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) եւ մանրամասն ծրագիրը—տրվում եւ ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (Ե. Հ. Չ.) 16—25

ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ դասընթացքի XIII շրջան
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Հեղինակ «Զեռնարկի առեւտրական և գործարանական հաշուապահութեան»
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ԳԱՏՐԱՍՏՈՒՄ Է
Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եւ բաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։
ԳԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ
Ա.) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առեւտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետեսութեան։
Բ.) Առեւտրական թուաբանութիւն։
Գ.) Առեւտրական նամակագրութիւն։
Դ.) Առեւտրական եւ մուրհակների կանոնադրութիւն։
Ե.) Գեղագրութիւն և ամենավաստ ձեռքերի ուղղելը։
Պարապմունքները սկսվելու են 1901 թ։ սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՒՍ ամսից յետոյ։
ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԿՈՒՐՍԻ ՎՃԱՐՆ Է 60 ՐՈՒԲԼԻ
Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ԿՈՒԿԻԱ, Նիկոլաեւսկայա փողոց, սեփական տուն, № 46։ (Николаевская ул. № 46)։
Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր լայնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ 20—25

Дозволено цензурою, Тифлисъ, 24 Августа 1901 г.
Электропечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкская ул.